

պարանով չափած հողամաս, ուրեմն վիճակ եւս հողամաս է :

Նախ՝ ոչ միայն հողամասը, այլ ամէն գոյք կարող է վիճակ կոչուել, ձեւաւոր ոճով, եթէ վիճակով է ստացուած :

Երկրորդ՝ չի երեւում, որ պ. Մանանդեան ստուգած լինի Հայկազեան բառգրքի կոչումը : Այլապէս ձեռնագրահատի մնար արտառոյց եղբակացութիւններից : Յոյն բառը իրօք դժուարութեան մէջ է դրել Ս. Գրքի հայ թարգմանիչներին : Տեսակ տեսակ բառեր են ընտրել միտքը մի կերպ արտայայտելու : Միայն վիճակ բառը չէ որ տեսնուի ենք schoinismos-ի դէմ, որ աւելի իմաստն է տալիս քան բառը թարգմանում : Մի տեղ գործ է անում պարանֆ (II Թագ. Ը. 2), մի տեղ՝ ապաւանդակֆ (Ես. ԾԴ. 3), մի ուրիշ տեղ՝ լարաբաժիմ (Ամովս է 18, Միք. Բ. 5) եւ վերջապէս վիճակ՝ (Յես. Ժէ 15, Եղ. Խէ 13) : Եւ ոչ schoinisma kleronomias է թարգմանում վիճակ ժառանգութեան, այլ եւ kleronomia առանձին, (Եղ. 47, 18) առանց schoinisma բառի :

Չի երեւում որ վիճակ հոգ նշանակէր անկախ հրէական հասկացողութիւնից :

Եթէ արդարեւ վիճակ արմատացած լինէր հայոց մէջ որպէս «համայնական-տոհմական հնագոյն շրջանի տերմին», թարգմանիչները դռնէ դուռ չէին ընկնել պատշաճաւոր բառ

դռնելու, այլ ամենուրեք կը դնէին վիճակ, նման նահապետ, նախարար խօսուն բառերի :

Անտեղի է յիշել նաեւ թովմա Արծրունու խօսքը արարների մասին թէ «արկանէին վիճակս եւ լարս ձգէին», սպացուցանելու համար որ լար ու վիճակ ձգելը եղել է հողարաշխի ձեւ նաեւ հայերիս մօտ :

Միամտութիւն կը լինէր կարծել, որ հրէշաւոր Բուղային ուղեկցող արարները հողեր գրաւելու ուրիշ միջոց չունէին քան լարով չափել եւ վիճակ ձգել : Թովմայի խօսքը ոճային սեթեւեթ է եւ ոչ իրական պատկեր, մի ձեւաւոր ասացուածք, անուամբ Ս. Գրքից :

Հարկաւ, այս չէ նշանակում որ լարն ու վիճակը ծանօթ չէին հայերին, ինչպէս եւ ծանօթ լինելուց բնաւ չի հետեւում, որ վիճակ տեքնիկ բառ է հողային իմաստով :

Մեզմ խօսելով, «վիճակ»ը շատ աւելի վատ վիճակի մէջ է դրուում քան ակնարկածս երեք բառերը, որոնց տեղն ուզում է բռնել : Բայց եւ այնպէս պ. Մանանդեան կարծում է, որ իր «լեզուական այս նոր դիտողութիւնները» զալիս են հաստատելու «իր ենթադրութիւնը համայնական հողատիրութեան գոյութեան մասին հին Հայաստանում» :

Միշտ նոյն ալելուիան, ծանօթ՝ ընթերցողներին :

(Վերջը յաջորդով)

## ԳԵՐՄԱՆ ՃԱՄԲՈՐԴ ՄՈՐԻՑ ՎԱԳՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

### I

«Հայրենիք»ի ընթերցողները արդէն ծանօթ են գերման ուղեւորներ Հաքատհաուզէնի եւ Բողենշտէդտի՝ Հայաստան կատարած ճամբորդութեանց : Առաջինը, ինչպէս կը յիշէ ընթերցողը, մեր երկիրն է այցելած 1843-ի օգոստոսին, իսկ երկրորդը՝ 1844-ի գարնանը :

1840-ական թուականներին Հայաստան եւ այցելում եւրոպացի ակաւաւոր թւրիշ ճամբորդներ եւս, որոնց աշխատութիւնները եւս հանդիսանում են ոչ նուազ արժէքաւոր աղ-

բիւրներ՝ ժամանակակից հայ կեանքը եւ հայ երկիրը ուսումնասիրելու համար :

Այդ ճամբորդների թւում առաջնակարգ տեղ է գրաւում գերման գիտնական Մորից Վագները :

Վերջինս զգալի չափով լրացնում է Հաքատհաուզէնի եւ Բողենշտէդտի գործը : Մինչ առաջինը առաւելապէս ընկերաբանի եւ տնտեսագէտի աչքով է դիտել մեր հայրենիքը, իսկ երկրորդը գրադէտի եւ բանահաւաքի, Մորից Վագներ, որպէս բնագէտ եւ աշխարհագրա-